# ԹՈՒՐՔԻԱՆ ՋԱՆՈՒՄ Է ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ՀԱՄՈԶԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՎԵԼԻ ՄԵՂՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ

Ստամբուլի «Մարմարան», վկայակոչելով թուրքական մամուլի հաղորդումները, գրում է, որ նկատվում են կանխանշաններ, ըստ որոնց Մեսութ Յըլմազի համախոհական կառավարությունը ցանկանում է դրական քայլեր ձեռնարկել Հայաստանի հետ փոխհարաբերությունները բարելավելու ուղղությամբ եւ «սրբագրել այն սխալները, որոնք կատարվել են նախորդ կառավարությունների կողմից: Այդ նոր ծրագրի դրոշակակիրը արտգործնախարար Իսմայիլ Ջեմն է, որն «առաջադեմ գաղափարներով անձնավորություն է»:

«Միլլիեթ» թերթի կարծիքով, Թուրքիայի ներկայիս ղեկավարները հավատում են, որ Հայաստանի սահմանը պետք է բացվի հնարավորին չափ շուտ եւ Հայաստանը պետք է ընդգրկվի նավթի Բաքու-Ջեյհան ուղեգծում, քանի որ արդեն կատարված սխալները պատճառ են դարձել, որ արեւմտյան նավթային ընկերությունները, ինչպես նաեւ Ռուսաստանն ու ԱՄՆ-ը միմյանց հետ մերձենան նավթի փոխադրության հարցում ռուսական նավահանգիստներն օգտագործելու տարբերակների հարցում: Այս խնդրում հանգավոր է նկատվում Ադրբեջանի նախագահը: Ջեմը պատրաստվում է սեպտեմբերի սկզբներին Բաքու մեկնել Ադրբեջանի նախագահին տարհամոզելու եւ նոր լուծումներ որոնելու համար:

«Ջումհուրիեթ» թերթը գրում է, որ նավթի տեղափոխման հարցով շահագրգռված ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը շտապում են հնարավորին շուտ լուծել Ղարաբաղյան հիմնախնդիրը: Երկու երկրներն էլ, թուրքական թերթի կարծիքով, հավասարապես ճնշում են գործադրում Հայաստանի ու Ադրբեջանի վրա: Մոսկվան հասկացել է, թե Ադրբեջանի ամբողջ նավթը չի կարող փոխադրել Նովոռոսիյսկի վրայով: Նույն աղբյուրի համաձայն, Մոսկվան Ալիեւից պահանջել է «ամենալայն ինքնավարություն» ճանաչել Ղարաբաղի համար եւ նույնն էլ պահանջելու է Լեւոն Տեր-Պետրոսյանից, որն օրերս մեկնելու է Ռուսաստանի մայրաքաղաք:

«Միլլիեթը» գրում է, որ Հայաստանի նախագահն իր վերջին հայտարարություններով քանիցս շեշտել է, որ Թուրքիայի ու Հայաստանի հարաբերությունների հաստատումը ոչ միայն նպաստելու է երկու երկրների շահերին, այլեւ պետք է ազդակ դառնա Ղարաբաղի հաշտության գործընթացին:

Ն Տ